

Դատական Գործ N: ԿԴ/0182/02/13

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է: 30-04-2013

Հայցվոր/դիմող	
Անուն	Անահիտ
Ազգանուն	Մեհրաբյան
Հայրանուն	Արմենակի
Հասցե	ք.Երևան, Վ.Վաղարշյան 24-95
Սեռ	Իգական
Անձնագիր	AK0222387
Ում կողմից	004
Սոց. քարտ	7503640340

Պատասխանող	
Անուն:	ՀՀ Կոտայքի մարզպետարան
Հասցե:	ք.Հրազդան, Կենտրոն վարչական շենք
Տիպ:	Առեվտրային /ԲԲԸ, ՓԲԸ, ՍՊԸ,Ա/Կ եվ այլն/

Ինքնուրույն պահանջ ներկայացնող:

3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	վնասի հատուցման պահանջի մասին
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	11.3
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:	
Ստացման կարգը:	Առաջին անգամ
Այլ նշումներ:	

Ամսաթիվ: 30-04-2013

Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Կոտայքի մարզ
Դատավորի անուն:	Արիստակես Վարդանի Սիսակյան

Դատավոր	
Դատարանի անվանում:	Կոտայքի մարզ
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	30-04-2013
Ամսաթիվ:	02-05-2013
Որոշման հիմքը	
Հոդված	91 Կետ 1
Որոշման բովանդակություն:	<p>ԿԴ/0182/02/13 Ո Ր Ո Շ Ո Ւ Մ</p> <p>Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ Ո Ւ Մ Ի Ը Ն Դ Ո Ւ Ն Ո Ւ Մ Ը Ս Ե Ր Ժ Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն</p> <p>02.05.2013թ ք.Հրազդան</p> <p>Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Սիսակյանս, քննարկելով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը</p> <p>ՊԱՐԶԵՑԻ.</p> <p>Անահիտ Մեիրաբյանը հայցադիմում է ներկայացրել դատարան հայտնելով, որ դեռևս խորհրդային տարիներին՝ 1987թ. աշխատել է Կոտայքի մարզի Նոր-Հաճնի թիվ 2 ռուսական դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի փոխարինող ուսուցչուհի: Խորհրդային իշխանություններն այն ժամանակ իրեն օգտագործել են որպես ստորուկ, աշխատավարձ չեն վճարել: «Փոխարինողի հրամանը կեղծ է եղել... իշխանությունները կեղծ փաստաթուղթ են կազմել, դրանով առաջ են տարել իրենց գործերը...» :</p> <p>Խնդրել է , որ՝ «դատարանը պարզի իր հարցերը, թե ինչքան վնասներ է կրել հայցվորը և պատասխանողին պարտավորեցնել հատուցելու վնասները: Այդ գումարը պետք է որոշի դատարանը...»:</p> <p>Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը, հանգում եմ այն հետևության, որ հայցադիմումի ընդունումը պետք է մերժել հետևյալ պատճառաբանությամբ:</p> <p>Հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, այսինքն՝ հայց հարուցելու իրավունքի նախադրյալներն օրենսդիրը թվարկել է առանձին /ՔԴՕ 91 հոդ. 1-ին մաս/ և միայն սահմանել է, որ դրանց բացակայության դեպքում դատավորը մերժում է դիմումի ընդունումը: Իսկ դա արդեն նշանակում է, որ եթե հայց հարուցելու իրավունքի նախադրյալները բացակայում են և դատավորն օրենքում նշված հիմքերով մերժում է դիմումի ընդունումը, ապա նույն հայցը հետագայում նորից հարուցվել չի կարող:</p> <p>Յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի ՀՀ քաղ. դատ. օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ , օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների , ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար / ՀՀ քաղ. դատ. օր-ի 2 հոդ/: Իսկ հայցի իրավունքը ծագում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լինել իր իրավունքի խախտման մասին /Քաղ. օր-ի 337 հոդ./:</p> <p>Սույն հոդվածի մեկնաբանությունից հետևում է նաև, որ շահագրգիռ անձ է համարվում այն անձը ում իրավունքները , ազատություններն ու օրինական շահերը խախտվել են և վերջինս էլ դրանք վերականգնելու համար կարող է դիմել դատական պաշտպանության:</p>

	<p>Դիմումում շարադրված և նշված չէ, թե դիմողի ոչոր իրավունքն է խախտվել :</p> <p>Ղատարանը գտնում է, որ դատական պաշտպանություն հայցողի՝ դիմողի պահանջը ընդհանրապես՝ և՛ դատական, և՛ ոչ դատական կարգով զուրկ է իրավական հիմքերից: Այսինքն սույն գործով բացակայում են պատասխանողի դեմ հայց հարուցելու իրավունքի նախադրյալները: Հետևաբար վեճը ենթակա չէ</p> <p>Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91 հոդ. 1-ին կետով, 144 հոդվածով</p> <p>ՈՐՈՇԵՑԻ.</p> <p>Հայցադիմումի ընդունումը մերժել:</p> <p>Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին ղատարանի որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ ղատարան՝ դիմողի կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:</p> <p>ԴԱՏԱՎՈՐ Ա. ՍԻՍԱԿՅԱՆ</p>
<p>Այլ նշումներ:</p>	
<p>Օրենսգիրք:</p>	<p>Քաղաքացիական դատավարության օրենսգիրք</p>
<p>Ղատական ակտ (վճիռ, որոշում):</p>	<p>ԿԴ/0182/02/13 Ո Ր Ո Շ Ո Ւ Մ</p> <p>Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ Ո Ւ Մ Ի Ը Ն Դ Ո Ւ Ն Ո Ւ Մ Ը Ս Ե Ր Ժ Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն</p> <p>02.05.2013թ ք.Հրազդան</p> <p>Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության ղատարանի ղատավոր Ա. Սիսականս, քննարկելով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը</p> <p>ՊԱՐՁԵՑԻ.</p> <p>Անահիտ Մեիրաբյանը հայցադիմում է ներկայացրել ղատարան հայտնելով, որ դեռևս խորհրդային տարիներին՝ 1987թ. աշխատել է Կոտայքի մարզի Նոր-Հաճնի թիվ 2 ռուսական դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի փոխարինող ուսուցչուհի: Խորհրդային իշխանություններն այն ժամանակ իրեն օգտագործել են որպես ստրուկ, աշխատավարձ չեն վճարել: «Փոխարինողի հրամանը կեղծ է եղել... իշխանությունները կեղծ փաստաթուղթ են կազմել, դրանով առաջ են տարել իրենց գործերը...» :</p> <p>Խնդրել է , որ՝ «ղատարանը պարզի իր հարցերը, թե ինչքան վնասներ է կրել հայցվորը և պատասխանողին պարտավորեցնել հատուցելու վնասները: Այդ գումարը պետք է որոշի ղատարանը...»:</p> <p>Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը, հանգում են այն հետևության, որ հայցադիմումի ընդունումը պետք է մերժել հետևյալ պատճառաբանությամբ:</p>

	<p>Հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, այսինքն՝ հայց հարուցելու իրավունքի նախադրյալներն օրենսդիրը թվարկել է առանձին /ՔԴՕ 91 հոդ. 1-ին մաս/ և միայն սահմանել է, որ դրանց բացակայության դեպքում դատավորը մերժում է դիմումի ընդունումը: Իսկ դա արդեն նշանակում է, որ եթե հայց հարուցելու իրավունքի նախադրյալները բացակայում են և դատավորն օրենքում նշված հիմքերով մերժում է դիմումի ընդունումը, ապա նույն հայցը հետագայում նորից հարուցվել չի կարող:</p> <p>Յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի ՀՀ քաղ. դատ. օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար / ՀՀ քաղ. դատ. օր-ի 2 հոդ/: Իսկ հայցի իրավունքը ծագում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին /Քաղ. օր-ի 337 հոդ./:</p> <p>Սույն հոդվածի մեկնաբանությունից հետևում է նաև, որ շահագրգիռ անձ է համարվում այն անձը ում իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը խախտվել են և վերջինս էլ դրանք վերականգնելու համար կարող է դիմել դատական պաշտպանության:</p> <p>Դիմումում շարադրված և նշված չէ, թե դիմողի ոչ իրավունքն է խախտվել :</p> <p>Դատարանը գտնում է, որ դատական պաշտպանություն հայցողի՝ դիմողի պահանջը ընդհանրապես՝ և՛ դատական, և՛ ոչ դատական կարգով զուրկ է իրավական հիմքերից: Այսինքն սույն գործով բացակայում են պատասխանողի դեմ հայց հարուցելու իրավունքի նախադրյալները: Հետևաբար վեճը ենթակա չէ</p> <p>Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91 հոդ. 1-ին կետով, 144 հոդվածով</p> <p>ՈՐՈՇԵՑԻ.</p> <p>Հայցադիմումի ընդունումը մերժել:</p> <p>Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան՝ դիմողի կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:</p> <p>ԴԱՏԱՎՈՐ Ա. ՍԻՍԱԿՅԱՆ</p>
Դատական ակտի ամսաթիվը:	02-05-2013
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ): Այլ նշումներ:	0
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	24-05-2013
Էջերի քանակը:	10
Գործին կից նյութեր:	

Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	29-05-2013
Էջերի քանակը:	10
Գործին կից նյութերը:	
Որ դատարան է ուղարկվել:	Քաղաքացիական վերաքննիչ
Ուր է ուղարկվել:	
Ելքի գրության համար:	Ե-1010/13
Ամսաթիվ: 01-06-2013	
Ամսաթիվ:	06-08-2013
Այլ նշումներ:	
Որ դատարանի դատական ակտն է մնացել անփոփոխ:	Առաջին ատյանի
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	07-08-2013
Էջերի քանակը:	40
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	07-08-2013
Էջերի քանակը:	40 թերթ
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Դատական Գործ N: ԿԴ/0182/02/13	
Ամսաթիվ: 23-05-2013	
Բողոք բերող անձը	
Անուն	Անահիտ
Ազգանուն	Մեհրաբյան
Հասցե	ք.Երեվան, Վ.Վաղարշյան 24-95
Ում կողմից է բերվել բողոքը:	Հայցվոր
Պետական տուրք:	0
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	

Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	
Գործի համարը:	
Այլ նշումներ:	
Բողոքը ստացվել է:	Միջանկյալ դատական ակտի դեմ
Ամսաթիվ:	01-06-2013
Վիճակագրական տողի համարը:	11.3
Գործի համարը:	ԿԴ/0182/02/13
Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):	10
Գործը ստացվել է:	Կոտայքի մարզ
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	03-06-2013
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաքննիչ
Դատավորի անուն:	Կարեն Վանուշի Չիլինգարյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաքննիչ
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Որոշման ամսաթիվ:	06-06-2013
Ժամկետ:	
Որոշման հիմքը	
Հոդված	213 Մաս 1 Կետ 1
Որոշման բովանդակություն:	<p>Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0182/02/13</p> <p>ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին</p> <p>6 հունիսի, 2013թ. ք. Երևան</p> <p>Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Վերա-քննիչ դատարան), նախագահությամբ դատավոր Կ. Չիլինգարյանի, ծանոթանալով թիվ ԿԴ/0182/02/13 քաղաքացիական գործով, ըստ հայցի Անահիտ Մեիրաբյանի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետարանի՝ վնասների հատուցման պահանջի մասին, ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան)՝ «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» 02.05.2013թ. որոշման դեմ հայցվորի կողմից բերված վերաքննիչ բողոքին և դրան կցված փաստաթղթերին, Պ Ա Ր Ջ Ե Ց</p> <p>Դատարանը 02.05.2013թ. որոշմամբ մերժել է հայցադիմումի ընդունումը՝ վկայակոչելով ՀՀ քաղ. դատ. օր.-ի 91-րդ հոդվածի 1-ին կետը: Հայցվորը նշված որոշումն ստացել է 22.05.2013թ. և հաջորդ օրը դրա դեմ վերաքննիչ բողոք է բերել: Վերաքննիչ դատարանում</p>

	<p>գործն ստացվել է 01.06.2013թ. և 03.06.2013թ. հանձնվել է նախագահող դատավորին:</p> <p>Ի խախտումն ՀՀ քաղ. դատ. օր.-ի 210-րդ հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերով և 4-րդ մասով սահմանված կանոնների.</p> <ol style="list-style-type: none"> 1. վերաքննիչ բողոքում չի նշվել գործի համարը. 2. վերաքննիչ բողոքը չի պարունակում նշում այն նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ, որոնք ազդել են գործի ելքի վրա. 3. վերաքննիչ բողոքը չի պարունակում նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումների, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության հիմնավորումները. 4. վերաքննիչ բողոքում չի նշվել բողոք բերած անձի՝ վերաքննիչ դատարանի լիազորություններին համապատասխանող որևէ պահանջ. 5. վերաքննիչ բողոքին չի կցվել դրա օրինակը պատասխանողին ուղարկելու փաստը հավաստող որևէ ապացույց: <p>Վերը նկարագրված խախտումները ՀՀ քաղ. դատ. օր.-ի 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմք են վերաքննիչ բողոքը վերադարձնելու համար:</p> <p>Վերաքննիչ բողոքը պարունակում է պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդություն, որը, սակայն, առարկայազուրկ է և ենթակա չէ բավարարման, քանի որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների համար պետական տուրքի վճարում:</p> <p>Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր.-ի 144-րդ, 214-րդ և 217-րդ հոդված-ներով, Վերաքննիչ դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց</p> <ol style="list-style-type: none"> 1. Բողոք բերած անձի միջնորդությունը՝ պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ, մերժել: 2. Թիվ ԿԴ/0182/02/13 քաղաքացիական գործով, ըստ հայցի Անահիտ Մեիրաբյանի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետարանի՝ վնասների հատուցման պահանջի մասին, Դատարանի՝ «Հայցադիմու-մի ընդունումը մերժելու մասին» 02.05.2013թ. որոշման դեմ հայցվորի կողմից բերված վերաքննիչ բողոքը վերադարձնել: <p>ՀՀ քաղ. դատ. օր.-ի 213-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձվելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում կրկին ներկա-յացվելու դեպքում բողոքը կհամարվի դատարանում ընդունված, սակայն բողոքը կրկին ներկա-յացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվի:</p> <p>Սույն որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ որոշումն ստանալուց հետո եռօրյա ժամկետում:</p> <p>ԴԱՏԱՎՈՐ Կ. ԶԻԼԻՆՊԱՐՅԱՆ</p>
Այլ նշումներ:	
Գործը հանձնվել է գրասենյակ:	25-06-2013
Էջերի քանակ:	
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	25-06-2013

Ամսաթիվ:	25-06-2013
Էջերի քանակ:	25
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	25-06-2013
Ուր:	Վճռաբեկ
Գրության համարը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	03-07-2013
Դատական Գործ N: ԿԴ/0182/02/13	
Ամսաթիվ:	13-06-2013
Բողոք բերող անձը	
Անուն	Անահիտ
Ազգանուն	Մեհրաբյան
Հասցե	Երևան, Վ. Վաղարշյան 24-95
Պետական տուրք:	0
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	Ըստ հայցի Անահիտ Մեհրաբյանի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետարանի՝ վնասների հատուցման պահանջի մասին: Անահիտ Մեհրաբյանի վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման դեմ:
Գործի համարը:	ԿԴ/0182/02/13
Ում կողմից է բերվել բողոքը:	Հայցվոր
Բողոքը ստացվել է:	Միջանկյալ դատական ակտի դեմ
Գործի ստացման ամսաթիվը:	03-07-2013
Էջերի քանակը:	25
Գործին կից փաստաթղթերը:	
Վճռաբեկ վարույթի համարը:	ԿԴ/0182/02/13
Ամսաթիվ:	03-07-2013
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Ելենա Միհրանի Սողոմոնյան

Ղատավոր	
Ղատարանի անվանում:	Վճռաբեկ
Ղատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	17-07-2013
Որոշման բովանդակությունը:	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ</p> <p>ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0182/02/13 ղատարանի որոշում 2013թ. Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0182/02/13 Նախագահող ղատավոր՝ Կ. Չիլինգարյան</p> <p>Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p> <p><<17>> հուլիսի 2013թ. ք. Երևան</p> <p>Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ ղատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ ղատարան),</p> <p>նախագահությամբ մասնակցությամբ ղատավորներ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ Ս. ԴՐՄԵՅԱՆԻ Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ</p> <p>քննարկելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական ղատարանի 06.06.2013 թվականի <<Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին>> որոշման դեմ Անահիտ Մեիրաբյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը,</p> <p>Պ Ա Ր Զ Ե Ց</p> <p>Անահիտ Մեիրաբյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության ղատարան (այսուհետ՝ Ղատարան) ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետարանի՝ վնասների հատուցման պահանջի մասին: Ղատարանի 02.05.2013 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական ղատարանի 06.06.2013 թվականի որոշմամբ Ղատարանի 02.05.2013 թվականի <<Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին>> որոշման դեմ Անահիտ Մեիրաբյանի բերած վերաքննիչ բողոքը վերադարձվել է: Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անահիտ Մեիրաբյանը և պահանջել է <<քննել կեղծիքը, չվճարված գումարների հարցը և հատուցել վնասը դրամով>>: Վճռաբեկ ղատարանը, քննարկելով վճռաբեկ բողոքը վարույթ</p>

ընդունելու հարցը, գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում նույն օրենսգրքի 231-րդ հոդվածի և 234-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, նոր երևան եկած կամ նոր հանգամանքները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝ վճռաբեկ բողոքում պետք է նշվեն բողոք բերած անձի պահանջը՝ օրենքների, այլ իրավական ակտերի վկայակոչմամբ և նշում այն մասին, թե նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, և դրանց հիմնավորումները, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը, նույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի որևէ ենթակետի հիմնավորումները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, կամ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք:

Վերլուծելով բողոք բերած անձի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործի ելքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում: Հետևաբար բերված բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի և 234-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին: Հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջին համապատասխան այն ենթակա է վերադարձման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ, 233-րդ և 234-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վերադարձնել թիվ ԿԴ/0182/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.06.2013 թվականի <<Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին>> որոշման դեմ Անահիտ Մեիրաբյանի բերած վճռաբեկ բողոքը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

	<p>Դատավորներ՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ</p> <p>Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ</p> <p>Վ. ԱԲԵԼՅԱՆ</p> <p>Ս. ԱՆՏՈՆՅԱՆ</p> <p>Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ</p> <p>Մ. ԴՐՄԵՅԱՆ</p> <p>Գ. ՀԱԿՈԲՅԱՆ</p>
Ամսաթիվ:	24-07-2013
Գործի առաքման ամսաթիվը:	02-08-2013
Դատարան:	Կոտայքի մարզ
Այլ նշումներ:	